

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Աւանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Երբ հասցէն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը լայն է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մ. Ն. Կատիօլ.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
տնագործիւն. Նամակ Արամեանից. Նա-
մակ Արամեանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՖԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստա-
նից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.
—ԽԱՆԻ ԼՈՒԲԻՆ.—ՀԵՌԱՍԻՆԻՆԻ.—ԲՈՐՍԱ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արե-
գակի խաւարումը օգոստոսի 7-ին 1887 թ.:

Մ. Ն. ԿԱՏԻՕԼ

Յուլիսի 20-ին Մոսկովայի ոչ հեռու
գտնվող Գնամենսկոէ ասիւմ իր կառուած-
քում փակնաւիցեալ «МОСКОВСІЯ ВѢДО-
МОСТИ» խմբագիր Միխայիլ Նիկիֆորովիչ
Կատիօլի եօթնամսուն տարեկան հասա-
կումն էր ծնւելից 1818 թ.ին Մոսկովա-
յում, աղքատ ծնողներից և իր ուսումնի էլ
ստացաւ նոյն մայրաքաղաքում, որի հա-
մալարանում է աւարտել իր ուսման ըն-
թացքը 1838 թ.ին:

Գեռ. ուսանող ժամանակ Կատիօլ սկսեց
գրականութեամբ զբաղվել 1839 թ.ին
հրատարակել կեղծ անունով իր ոտանա-
ւորների ժողովածուն, որ ասկայն աշոյու-
թիւն չը գտաւ Նոյն թ.ին հանդուրժեալ
Մոսկովայի համալսարանում ուսաց գրա-
կանութեան մագիստրոսի հարցաքննութիւն
տուել, իսկ 1845 թ.ին հրատարակել իր
մաղիմարական դիւրեւանային «Объ эле-
ментахъ и формахъ славяно-русскаго
языка» վերնագրով: Նա թարգմանութիւն-
ներ էլ ունի, և ի մէջի այլոց թարգմանեց
ուսերէն լեզուով Շէկսպիրի «Բամօ և Իւ-
լիա» դրաման: Բացի սրանից Կատիօլ տը-
պում էր իր ոտանաւորները «Отечествен-
ныя Записки» ամսագրում:

Կատիօլ քառասուններորդ թւականներում
ճանապարհորդեց Գերմանիա, որտեղ երե-
ւելի Շէկսպիրի ղեկավարութեամբ պարա-
պում էր իր իրիւսօփայտութեամբ, իսկ Գերմա-
նիայից վերադառնալով նշանակվեցաւ փի-
լիսոփայութեան պրոֆէսոր Մոսկովայի հա-
մալսարանում: Սակայն 1849 թ.ին այդ
համալսարանի փիլիսոփայութեան ամբիօնը
ոչնչացաւ և ահա 1850 թ.ին սկսած
Մոսկովայի ուսումնարանական շրջանի հո-
գաբարձուն նշանակել Կատիօլին խմբագիր
«МОСКОВСІЯ ВѢДОМОСТИ» լրագրի, որի
պաշտօնը նա վարեց մինչև մահը: Կատիօ-
լի գրականական նշանաւոր շրջանը զլիսա-
ւորապէս սկսվում է 1856 թ.ին, երբ նրա

նախաձեռնութեամբ հիմնվեցաւ «Русскій
Вѣстникъ» ամսագիրը, որի խմբագիր
պաշտօնում հանդուրժեալ մնաց նոյնպէս
մինչև իր մահը:

Կատիօլի գրականական ուղղութիւնը
խիստ պահպանողական էր, բայց նա չէր
հանդիսանում որպէս ուսուցիչ մի որոշ
կազմակերպութեան ներկայա-
ցուցիչ, այլ իր քարոզած գաղափարները
իր անձնական համոզմունքից բխած դա-
մապարներ էին և այդ է պատճառը որ
այժմ մեռնելով, նա չէ թողնում իրանից
յետոյ մի որոշ կազմակերպութեան շարժ-
(չօյա), այլ միայն անձնական յարգողներ
և հետևորդներ:

Չէ կարելի չը խոստովանվել, որ հան-
դուրժեալ իր գրականական ամբողջ ըն-
թացքում, մօտ 40 տարի շարունակ, իր
բունած գրականական և քաղաքական ուղ-
ղութեան տեսակէտից, մեծ դժ էր ներկա-
յացնում և ահադին ապրեցութիւն ունէր
թէ մամուլի ու հասարակաց կարծիքի վը-
րա և թէ իր հայրենիքի քաղաքական անց-
քերի ու քաղաքական դրոճերի ընթացքի
վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆԱԳԱՎՈՒԹԻՒՆ

«Кавказская война», В. ПОТТО. У. Պետերբուրգ,
1887 թ.

Երբ ստուար հատորների բաժանած այս աշ-
խատութեան մասին «Մշակը» (№ 73) մի կարճ
տեղեկութիւն տալով, գովասանքով մասնացոյց
էր արել երեք յօդուածների վրա, որոնք վերաբը-
ն են երրորդ հատորի վերջում և կրում են այս վեր-
նագիրները. ա) Հին Հայաստան, բ) Գիւտտոնիայ
Հայաստան և գ) Հայաստանի վերածնութիւնը:
Բայց հեղինակի տեղեկութիւնները հայերի և Հա-
յաստանի մասին չեն սահմանափակված այդ ե-
րեք յօդուածներին չըլծնալով: Ամբողջ պատմու-
թիւնը կովկասին է նուերված, հետեալաւ և նը-
ւերված է այդ երկրում ապրող ազգաբնակչու-
թիւններին, որոնք որ և է պատմական դեր են
կատարել անցեալ դարու վերջերում և ներկայի
սկզբներում: Իսկ յայտնի է որ հայերը, աւելի
չափ քան մի ուրիշ ազգ, զործել են այդ ժամա-
նակներում, ուստի և աւելի մեծ տեղ ունեն բըւ-
նած պ. Պոտտոյի նկարագրութիւններում: Երա-
ւանչիւր մէկը, որին հետաքրքրում է մեր երկրի
մօտիկ անցեալը, մեր պատկերի կեանքը, կը զըս-

չիջանում է օրվայ վերջին շառաւիղը և մի վայր-
կեանում ամբողջ ընթացիւնը ընկղմվում է լուս-
թեան մէջ: Մարդը ապշած է մնում այդ սարսա-
փելի պատկերից: Թուշնը, որ ուրախ ճակրում
էր, երկիւղելից թաղում է ծառի մէջ, չունը կըս-
չում է իր տիրող ոտներին. հաւը թիկնով ծած-
կում է իր ձագերին և ամբողջ կենդանի ընու-
թիւնը թմբած լուսւմ է դարձնելով մէջ: Երկնքի
վրա սկսում են երեւալ տառեր, դառնում է մութ,
օտարադի, դարձնալով զլեւեր Բայց ինչ հիւսնալի
տեսարան է ներկայացնում այդ ժամանակ երկն-
քի մէջ կէտի վրա նայողներին: Արեգակի փա-
խալներ երևում է սև սկաւառակ, պատած լուսա-
ւոր թաղով. այդ երկրական թաղի մէջ երևում
են խաւարած արեգակից ցրվող հաւաքալթիւնի
անգլին խորձերը 2—3 րոպէի ընթացքում ստու-
ղագէտները ուսումնասիրում են արեգակի դարձա-
նալի չըլծնալուց, որոնք տեսնելի են դառնում
այն պատճառով, որ լուսինը ծածկում է արեգակի
փայլուն սկաւառակը, մինչդեռ մարդիկ դարձնա-
լի ու լուսութեան մէջ անհամբեր և չիտթված
սպասում են երկնքի վերադառնալուն, մի երե-
ւոյթի, որը երբեք տեսած չէին և դուրս է եկել
չը պիտի էլ տեսնել Գաղիկի լոյսի շառաւիղը
դուրս է ցայտում լուսնի մութ սկաւառակի և
տեղից Հիւսնաման գոչիւնը հազարաւոր ձայներով

նէ այդտեղ բաղմաթիւ մանրագետութեամբ փաստեր,
յիշատակարաններ:

Պ. Պոտտո իր համար նպատակ է ընտրել գրի
անցկացնել այն ամենայն եղելութիւնները, ամենայն
աւանդութիւններն ու բերանացի գրոյցները, ո-
րոնք վերաբընում են Կովկասի ուսաց ձեռք
անցնելու ժամանակամիջոցին: Եւ այդ գործին
ձեռնամուխ է եղել, ինչպէս երևում է, նախա-
պէս ուսումնասիրելով գրականութիւնը, նախա-
պէս դէն դնելով անձնական հայեցողութիւնը և
զրա փոխադրել յանձն առնելով փաստերը փա-
տերով վերակշռելու, դուրս. պարտականութիւնը:
Նա անկողմնապահ պատմիչ է երևում: Ազգե-
րի, ժողովուրդների իրաւունքները յարգում է,
աւանդաբարութեամբ օնիականութիւնը սրտում
է, ինչպէս ամբողջ օր լինի, և տեղերին է յանձ-
նում: Ուշի մտքը սկանչ է դնում առաւելաբա-
նութիւններին, քաղցրութեամբ պատմում է ժո-
ղովրդական այն աշխատանքային տեղեկագործու-
թիւնները, որոնք շատ անգամ անտաշ լինելով
դուրս է մի ուրիշ անհետաքրքիր և սեթեթե
աւելորդութիւն երևային: Այսպէս օրինակ, պատ-
մում է խորհրդայն. արձանագրած առաւելները
հայկապանց հարստութեան անդրադառնալուն ժա-
մանակների վերաբընալ, ողորված խօսում է
տիտանական հրաշագործութիւնների մասին, մի
և նոյն ժամանակ տանում է ընթերցողի միտքը
դէպի այն կողմը, ուր հասկանալի են դառնում
այդ առաւելների ուղղութիւնը, միտքը, յարա-
բերութիւնը դէպի ժամանակը և անցքերը: Մեզ
չափ դուր եկաւ մանաւանդ Անիի հովտի եկեղե-
ցու հետ կապված աւանդութիւնը, որ հեղինակը
պատմում է մի գեղարուեստական փափուկ ոճով
փայլ չէ, եթէ այդ աւանդութիւնը բոլորովին նը-
ման չէ մեր լսածներին. մենք իրաւունք չունենք
կարծել թէ դա աւանդութիւն չէ, աւանդութիւն-
ները բաղմապան են դանապան կողմերի ժողո-
ւորների բերանում: Աւանդութիւնների հովտի
գեղարուութիւնը միանշանակութեամբ բացակայու-
թեան մէջն է: Պ. Պոտտո այնպէս զգածուած
պատմում է այդ աւանդութիւնը, որ կարծես դա
իր մայրենի սեփականութիւնն է, որ այնքան
քաղցրութիւն ունի, այնքան ընտանի տէր է պա-
րունակում իր մէջ: Նա մի անկողմնապահ պատ-
միչի յատկութիւնները:

Աւելցնել որ Կովկասին է երբեք մեծ հատորների
նիւթը: Չենք կարծում որ ուսաց արեգակնու-
թիւնը հաստատուել ժամանակամիջոցին սեղի
ունենցած որ և է անցք մուսացութեան արված լի-
նի: Մասնաւորապէս առաւ ևս Ղարաբաղի մա-
սին տեղեկութիւնները Պետրոս մեծի ժամանակ-

ներից սկսած: Ղարաբաղի խաների գործողու-
թիւնները, ժողովրդի ձգտումները, պատերազմա-
կան գործերը բաւական ընդարձակ տեղ են բըւ-
նում: Մուսացված են միայն Ղարաբաղի հայ մե-
լիները, մեր նոր պատմութեան այդ դիմագործի
և կիսաձանթ գործիչները, որոնց մասին շատ
քան զրվել է և դեռ պիտի զրվի, մինչև որ իսկու-
թիւնը չը պարզվի միանգամայն իրաւ. է, պ.
Պոտտո տեղ տեղ յիշում է մէլիներին, բայց յի-
շում է ինչպէս երկրորդական դերերի տէր ժողո-
ւրդապետների անուններ: Ինչպիսի վերագրել այդ:
Հեղինակը բան թաղցնող չէ, եթէ ոչ թաղցնելու
չափ քան կար, հէնց նոյն իսկ Արշակունի և
Բագրատունի թագաւորների մեծագործութիւննե-
րը ու պատմութիւնները: Եւ ինչպէս մեծ է
քեր. ինչպիսի մուսացի է հեղինակը: Ահա մի
հարց, որ մտաւանդութիւն պիտի պատճառէ մե-
լիների անունները անանաթեան հասցնելու
տրամադրի մի հեղինակին, որի բարեբաւ երեւա-
կայութիւնը դառնացութիւնների է հանում:

Գնահատելի է մանաւանդ հեղինակի տէր դէ-
պի անձնագրի և ընդհանուր շահերին նուիրված
գործիչները, ինչ ազգից որ լինէին դրանք: Ինչ
որ գաղտնի են թողել պատմութեան առաջ, ինչ
որ շատերը քաղցրութիւն են համարել անորոշ խօս-
քերով ու կիսատ ակնարկներով խոստովանել, պ.
Պոտտո պարզում է մի մեծ անկողմնապահ: Որ-
պիսի եւանդով պաշտպանում է նա իշխան Մա-
ղաթովին. ընթերցողը պարզ տեսնում է այդ հա-
յազգի հուշակաւոր հերոսին ինտրիգաների զոհ.
դառած, տեսնում է նրան պատերազմի դաշտում
սուրը ձեռքի զօրք վարելիս և մի նոյն ժամանակ
ընկճված այն մտքի տակ, թէ որպէս ազատի իր
վրա բարոյած անուր զրպարտութիւններից: Մի
տեղ հեղինակն ասում է թէ Շուշիի մէջ թմբկա-
հարութեամբ իշխանութիւնը հրաւիրում էր ժողո-
ւորը գնահատելու բանալ Մաղաթովի դէմ Նը-
րա շարեկամը մեծ, զօրեղ մարդ էր—Կովկասի
զլխաւոր հրամանատար կոմս Պատկերիչը: Նա էր
աշխատում որ անպարտելի հերոսը, որ հակադա-
կան քայլերով այնքան առաջ էր վազել, չուտով
խորտակվի թէ բարձրադից իշխանութեան և թէ
ժողովրդի աչքի առաջ: Եւ հեղինակը չը թաղց-
նելով որ Մաղաթովի մահաւոյթ տկարութեան
պատճառներից մէկն էլ այդ հաւաքածն էր, դա-
լիս է արդարապէս նրան գէթ պատմութեան, ա-
պագայ սերունդ առաջ: Նոյն կոմս Պատկերիչն էր,
որ հեռացրեց Ներսիսից նահանգապետ դերերալ
Կրասոսկոն ուրպէս թէ նրա չափազանց հայա-
սիրութեան պատճառով: Ներսէս հինգերորդը
Բնասարաբիայի թեմը պատուաւոր աքսոր գնաց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՎԱԿԱՆ ԽԱՐԱԿՈՒՄԸ 04-08-08 7-ԻՆ 1887
ԹԻԻ

Աստղագիտութիւնը ժողովրդականացնող հոչա-
կաւոր Ֆլամմարիօն հետեւալ խօսքերով է նկա-
րագրում արեգակի խաւարումը.

Որոշած ժամին, որ աստղագիտները դուշակել
են, արեգակի փայլուն սկաւառակը սկսում է
մինչև արեգակի արեգակնային կողմից, բոլորակի սև հա-
տածը հանդարտ առաջ իջ պայ, աւելի և աւելի
ծածկելով արեգակի սկաւառակը, կողովի գէ-
պի արեգակը, աստիճանաբար խափանելով արե-
գակի լոյսը: Հողափնի վրա ամեն կողմից լոյսը
նուազում է. մութ, գունատ լուսաւորութիւնը
փոխարինում է արեգակի պայծառ փայլուն, որը
մինչև այդ րօպէն լուսաւորում էր ամբողջ բնու-
թիւնը: Նրանք զգացնում են տիրում մարդուն: Ա-
հա, պայծառ փայլուն սկաւառակից մնում է մի-
այն նեղ կամարը կեանքը, կարծես, ամենաբա-
րակ թիկն վրա է դնւ կանգնած: Սակայն ահա

չիջանում է օրվայ վերջին շառաւիղը և մի վայր-
կեանում ամբողջ ընթացիւնը ընկղմվում է լուս-
թեան մէջ: Մարդը ապշած է մնում այդ սարսա-
փելի պատկերից: Թուշնը, որ ուրախ ճակրում
էր, երկիւղելից թաղում է ծառի մէջ, չունը կըս-
չում է իր տիրող ոտներին. հաւը թիկնով ծած-
կում է իր ձագերին և ամբողջ կենդանի ընու-
թիւնը թմբած լուսւմ է դարձնելով մէջ: Երկնքի
վրա սկսում են երեւալ տառեր, դառնում է մութ,
օտարադի, դարձնալով զլեւեր Բայց ինչ հիւսնալի
տեսարան է ներկայացնում այդ ժամանակ երկն-
քի մէջ կէտի վրա նայողներին: Արեգակի փա-
խալներ երևում է սև սկաւառակ, պատած լուսա-
ւոր թաղով. այդ երկրական թաղի մէջ երևում
են խաւարած արեգակից ցրվող հաւաքալթիւնի
անգլին խորձերը 2—3 րոպէի ընթացքում ստու-
ղագէտները ուսումնասիրում են արեգակի դարձա-
նալի չըլծնալուց, որոնք տեսնելի են դառնում
այն պատճառով, որ լուսինը ծածկում է արեգակի
փայլուն սկաւառակը, մինչդեռ մարդիկ դարձնա-
լի ու լուսութեան մէջ անհամբեր և չիտթված
սպասում են երկնքի վերադառնալուն, մի երե-
ւոյթի, որը երբեք տեսած չէին և դուրս է եկել
չը պիտի էլ տեսնել Գաղիկի լոյսի շառաւիղը
դուրս է ցայտում լուսնի մութ սկաւառակի և
տեղից Հիւսնաման գոչիւնը հազարաւոր ձայներով

չայտնում է արեգակի վերադառնալը, նոյնպէս
մաքուր և պայծառ, նոյնպէս հրաշէկ, նոյնպէս
ստոյգ: Այդ գոչիւնի մէջ լավում է անկեղծ, ան-
թաղցնելի ուրախութեան արտայայտութիւն....

Մենք կամենում ենք, որքան կարելի է, բացա-
տրել այդ բանաստեղծական ձևով նկարագրած
նշանաւոր երեւոյթի բնական պատճառը:

Ինչպէս յայտնի է, լուսինը պտտւում է հողա-
գնտի շուրջը, այս վերջինն էլ արեգակի շուրջը և
այդ շրջադարձութիւնները կատարվում են համա-
րեւ մէկ մակարդակի մէջ: Բայց սխալ կը լինէր
եղբայրացնել, թէ լուսինը ամեն անգամ, երբ զը-
տնվում է արեգի և երկրի մէջ, անպատճառ. պի-
տի ծածկել առաջինի լոյսը: Բանը դրա մէջն է,
որ արեգակի խաւարումը - պատճառում է միայն
այն գէպերը, երբ որ հողագնտի ընթացքի մա-
կարդակը կատարելապէս հանդիպի լուսնի ըն-
թացքի մակարդակին. իսկ որովհետեւ լուսնի և հո-
ղագնտի մակարդակները միմեանց վրա ծածկ են,
լուսինը երբեմն անց է կենում արեգի վերելի կող-
մից, երբեմն էլ վարել:

Հողագնտի տարեկան ընթացքը կանոնաւոր շըր-
ջանակ չէ, այլ թրտում (էլլիպս), ինչպէս որ առ-
հասարակ երկնային մարմինների ճանապարհները:
Ամսուր հողագնտը հեռանում է արեգակից և
մեծագոյն հեռաւորութիւնը հասնում է 142 մի-

լիօն վերստի, ձմեռը մօտենում է նրան մինչև
փոքրագոյն հեռաւորութիւնը—136 միլիօն վերստ:
Ուստի մեր աչքին արեւը ամառը երևում է աւելի
փոքր քան ձմեռը:

Մի և նոյն պայմաններում գտնվում է և լուսի-
նը. նա էլ երկրից հեռանալիս մեզ փոքր է թը-
ւում, իսկ մօտեցած միջոցին մեծ: Նորա մեծա-
գոյն և փոքրագոյն տարածութիւնները հողագն-
տից տատանվում են 340 հազարից մինչև 380
հազար վերստի մէջ:

Միայն յիշալ աներևակայելի հեռաւորութիւնը
մեզանից պատճառ է լինում, որ արեգակը եր-
բեմն լուսնից մեզ փոքր է երևում, եթէ ոչ ամ
բողջ լուսնի գունդը հողագնտից 49 անգամ
փոքր է, իսկ արեւը հողագնտից մէկ միլիօնից ա-
ւել անգամ մեծ է:

Ուրեմն երբ որ լուսինը գտնվում է արեգակի
և հողագնտի մէջ և այդ երեք երկնային մարմին-
ները լինում են մէկ գծի վրա, կարող է պատա-
հել. ա) որ արեգակի հեռաւորութիւնը երկրիցս
տանել է մեծագոյն տանձմանին (մեծութիւնն էլ
փոքրագոյն) և մի և նոյն ժամանակ լուսնի տա-
րածութիւնը երկրից դուրս է փոքրագոյնը (մե-
ծութիւնն էլ մեծագոյն).—այս պայմաններում
լուսինը իր մարմնով ծածկում է արեգակի սկա-
ւառակը կատարելապէս և լինում է ԲՈՂՈՐԱ

